ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-508-30.04.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում.

1 .«Շուկայի կանոններ» հասկացությունում «էլեկտրաէներգետիկական համակարգում» բառերը փոխարինել «էներգետիկայի բնագավառում» բառերով, իսկ «համակարգի» բառը փոխարինել «բնագավառի» բառով.

2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ՝ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած իրավիճակ, երբ պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականացնել տնտեսական կարգավարում.

«Տարանցիկ փոխադրում՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին.

«Հավասարակշռում՝ էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման ընթացքում էլեկտրական էներգիայի (հզորության) պակասուրդի կամ ավելցուկի տնտեսական կարգավարում:»:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածում

1. ժ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «ժ) լիցենզիայի պայմանների կատարման, վերահսկման, հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների ու տեղեկությունների հավաստիության ուսումնասիրության նպատակով իրականացնում կամ կազմակերպում է լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ Հանձնաժողովի կողմից ընդունված կարգով:».

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ ժզ) և ժէ) կետերով.

   «ժզ) սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման և հավասարակշռման կարգը,

ժէ) սահմանում է էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակների ժամանակ էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման և արտահանման կարգը:»:

Հոդված 3. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա ունեցող անձին տրվում է էլեկտրական էներգիա (հզորություն) գնելու և (կամ) իր կողմից արտադրված էլեկտրական էներգիան (հզորությունը) շուկայի կանոններին և լիցենզիայի պայմաններին համապատասխան արտահանելու իրավունք:»:

Հոդված 4. Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնհինգ տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայանների կողմից քսան տարվա ընթացքում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Հոդվածի 1-ին մասի գ) կետով սահմանված ժամկետի ավարտից հետո փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը:

Հոդված 5. Օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆ ԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

/հ	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ՝ Նաիրա Զոհրաբյան, Արծվիկ Մինասյան, Արմեն Մխիթարյան, Աղվան Վարդանյան, Ռուբեն Հակոբյան, Հեղինե Բիշարյան Առաջարկը ներկայացվել է 2014 թվականի մայիսի 15-ին :	1.Առաջարկում ենք օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի առաջին պարբերության սկզբում լրացնել հետևյալ բառերը՝ «Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում»: 2.Առաջարկում ենք օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի առաջին պարբերության «կողմից և» բառակապակցությունից հետո ավելացնել «հիդրոէլեկտրակայանների,» բառը: 3. Առաջարկում ենք օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի երկրորդ պարբերության «ազատականացման կանոնները» բեռերից հետո ավելացնել «հետևյալ սկզբունքով՝ ա) փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման ամբողջ ծավալով և արտադրման ամբողջ ժամանակահատվածի համար. բ) արտադրված էլեկտրաէներգիայի (հզորության) սակագինը ձևավորվում է սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված կարգով, բայց ոչ պակաս քան բնակչությանը	**1.Չի ընդունվել:** 2.Չի ընդունվել: Քանի որ փոքր ՀԷԿ-րի կառուցման բիզնեսը ՀՀ-ում կայացված է և լրացուցիչ արտոնությունների անհրաժեշտություն չկա: 3. Չի ընդունվել: Նկատի ունենալով, որ սույն առաջարկությունը նոր հարցեր է առաջացնում, ուստի առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերության վերջին նախադասությանը անդրադառնալ ավելի ուշ:	Առաջին ընթերցմամբ ներկայացված նախագծում շուկայի մասնակի ազատականացման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից հստակ դիրքորոշում չեր առաջարկվել, ինչը ՀՀ Պատգամավորների մոտ առաջացրեց տարաբնույթ հարցեր: Հաշվի առնելով նախագծի, բացի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերության վերջին նախադասության, ընդունման հրատապությունը, գտնում ենք նպատակահարմար Նախագծից հանել 4-րդ հոդվածի երկրորդ պարբերության վերջին նախադասությունը և Նախագիծը ներկայացնել նոր խմբագրությամբ: Իսկ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը կազմակերպել լայն քննարկումներ և ««էներգետիկայի մասին»» ՀՀ Օրենքի փոփոխության նոր նախագիծ ներկայացնել ՀՀ Աժ, որով կկարգավորվի երաշխիքային ժամկետի ավարտից հետո վերականգնվող ռեսուրսներով աշխատող կայանների հետագա շահագործման պայմանները:

		էլեկտրաէներգիայի վաճառքի ցերեկային գնի 50 %-ը:» բառերով:		